ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1318-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2015.11.25/78(1167) Հոդ.1023	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	12.11.2015
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	19.11.2015
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	05.12.2015	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2015 թվականի N 1318-Ն

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը փոփ. 25.03.21 N 396-Ն)

(որոշումն ուժը կորցնում է մասնակի 2023 թվականի փետրվարի 1-ից՝ համաձայն 28.07.22 N 1180-Ն որոշման 6-րդ և 7-րդ կետերի, բացառությամբ բժշկասոցիալական վերափորձաքննության դրույթների և մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը բժշկասոցիալական փորձաքննության համար դիմած անձանց մասով, որոնք գործում են մինչև 2024 թվականի հունվարի 1-ը)

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 583-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել միասնական սոցիալական ծառայության կողմից իրականացվող փորձաքննություններին հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:

(1-ին կետը փոփ. 25.03.21 N 396-Ն)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Հ. Աբրահամյան**

2015 թ. նոյեմբերի 19
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 12-ի N 1318-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

(վերնագիրը փոփ. 25.03.21 N 396-Ն)

1. Սույն կարգով կարգավորվում են միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից իրականացվող փորձաքննություններին հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) մասնակցության հետ կապված հարաբերությունները:

(1-ին կետը փոփ. 25.03.21 N 396-Ն)

2. Սույն կարգի նպատակն է փորձաքննվող անձի համաձայնության կամ ցանկության դեպքում ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը բժշկասոցիալական փորձաքննության գործընթացին որպես դիտորդ՝ ապահովելով այդ գործընթացի հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

3. Կազմակերպությունները Ծառայությունների կողմից իրականացվող փորձաքննություններին մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) են ներկայացնում՝

1) հայտ՝ համաձայն ձևի.

2) իրենց կողմից լիազորված ներկայացուցիչների ցուցակը (այսուհետ՝ ցուցակ), որում ներառվում են կազմակերպության ներկայացուցչի (ներկայացուցիչների) անունը, ազգանունը, հասարակական կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն.

3) կազմակերպության կանոնադրությունը և (կամ) կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի նկարագրությունը, որը հավաստում է հաշմանդամության ոլորտում տվյալ կազմակերպության առնվազն 2 տարվա գործունեության փաստը:

(3-րդ կետը փոփ. 25.03.21 N 396-Ն)

4. Նախարարությունը հայտն ընդունելուց հետո մեկ ամսվա ընթացքում ուսումնասիրում է սույն կարգի 3-րդ կետում նշված փաստաթղթերը և ցուցակը տեղադրում նախարարության պաշտոնական կայքէջում (www.mlsa.am), որից հետո կազմակերպության ներկայացուցիչներն իրավունք ունեն մասնակցելու փորձաքննություններին:

5. Ծառայությունները կազմակերպության ներկայացուցիչների մասին տեղեկանում են նախարարության պաշտոնական կայքէջից:

(5-րդ կետը փոփ. 25.03.21 N 396-Ն)

6. Նոր կազմակերպությունների կողմից հայտ ներկայացվելու դեպքում նախարարությունը համալրում է կայքէջում տեղադրված ցուցակը՝ սույն կարգի 4-րդ կետի պահանջներին համապատասխան:

7. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված պահանջները չկատարելու դեպքում նախարարությունը մերժում է կազմակերպության հայտը:

8. Կազմակերպությունները երեք տարին լրանալուց հետո մեկ ամսվա ընթացքում վերահաստատում են իրենց ներկայացուցչի (ներկայացուցիչների) թեկնածությունը կամ ներկայացնում են այլ ներկայացուցչի (ներկայացուցիչների) թեկնածություն՝ սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համապատասխան:

9. Ծառայությունը փորձաքննությանը կազմակերպության ներկայացուցչի մասնակցելու իրավասության վերաբերյալ փորձաքննվող անձին կամ նրա օրինական ներկայացուցչին իրազեկում է բժշկասոցիալական փորձաքննության դիմումն ընդունելիս:

(9-րդ կետը փոփ. 25.03.21 N 396-Ն)

10. Փորձաքննվող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը փորձաքննության օրը տալիս են իրենց գրավոր համաձայնությունը կազմակերպության ներկայացուցչի մասնակցելու վերաբերյալ: Գրավոր համաձայնությունը կցվում է «վարչական վարույթին (բժշկասոցիալական փորձաքննական գործին)»:

11. Կազմակերպության ներկայացուցիչը փորձաքննություններին մասնակցելու համար ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով:

12. Անձի բժշկասոցիալական փորձաքննությանը կարող է մասնակցել հասարակական կազմակերպության առավելագույնը երկու ներկայացուցիչ:

13. Կազմակերպությունները Ծառայությունների կողմից իրականացվող փորձաքննությունների ժամանակացույցի վերաբերյալ տեղեկանում են նախարարության պաշտոնական կայքէջից:

(13-րդ կետը փոփ. 25.03.21 N 396-Ն)

14. Կազմակերպությունների ներկայացուցիչները Ծառայության կողմից իրականացվող փորձաքննությանը մասնակցում են դիտորդի կարգավիճակով:

(14-րդ կետը փոփ. 25.03.21 N 396-Ն)

15. Դիտորդն իրավունք ունի Ծառայությանը ներկայացնել իր գրավոր դիտարկումները, կատարել գրառումներ:

(15-րդ կետը փոփ. 25.03.21 N 396-Ն)

16. Դիտորդն իրավունք չունի միջամտելու Ծառայության աշխատանքներին:

(16-րդ կետը փոփ. 25.03.21 N 396-Ն)

17. Դիտորդը պարտավոր է օրենքով սահմանված կարգով պահպանել անձի վերաբերյալ անձնական տվյալներ հանդիսացող տեղեկատվության գաղտնիությունը:

18. Փորձաքննվող անձը փորձաքննության ցանկացած պահի կարող է հրաժարվել դիտորդի մասնակցությունից:

19. Կազմակերպությունները կարող են վերլուծել իրենց ներկայացուցիչների մասնակցության արդյունքները և համապատասխան դիտարկումներ ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի փետրվարի 25-ի N 98-Ն որոշմամբ հաստատված Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովին:

(հավելվածը փոփ. 25.03.21 N 396-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան